ԴՌՆԲԱՑ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԼՈՒՄԱԲԱՆՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հետազոտություն

ԵՐԵՎԱՆ 2017

Հետազոտությունն իրականացվել է «Իրավունքի ուժ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի (European Endowment For Democracy) ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Դատական նիստերի ազատ լուսաբանումը՝ որպես արդար դատաքննության նախադրյալ» ծրագրի շրջանակներում:

Բովանդակություն

Ներածություն 4

Մեթոդաբանություն 6

ԳԼՈՒԽ I Իրավական փաստաթղթերի վերլուծություն 8

1.1 Դատական գործերի հրապարակայնության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը և միջազգային փորձը 8

1.2 Ներպետական օրենսդրությունը 19

ԳԼՈՒԽ II Հայաստանյան արդի պրակտիկա 27

2.1 Դատական նիստեր լուսաբանող լրագրողների հետ խորքային հարցազրույցների վերլուծություն 27

2.1.1 Լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնելու արգելքներն ու դրանց հետ կապված խնդիրները 29

2.1.2 Լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնելու սահմանափակումներն ու դրանց հետ կապված խնդիրները 35

2.1.3 Դատական նիստերի լուսաբանման տեխնիկական խոչընդոտները 37

2.2 Դատական նիստեր լուսաբանող լրագրողների հետ առցանց հարցման արդյունքների վերլուծություն 39

ԳԼՈՒԽ III Առաջարկություններ և հանձնարարականներ 46

Հավելված 2 51

Հավելված 3 52

Հավելված 4 54

Հավելված 5 56

Ներածություն

Արդարադատության իրականացումն ապահովելու կարևորագույն բաղադրիչներից է արդարադատության իրականացման հրապարակայնությունը, քանի որ այն մի կողմից հնարավորություն է տալիս, որ հասարակությունը վերահսկի դատական իշխանությանը, մյուս կողմից՝ դատական իշխանությունը հաշվետու լինի հասարակությանը:

Հրապարակայնությունն արդարադատության իրականացման կարևոր և պարտադիր պայման է և արդարացի դատական քննության իրավունքի բաղադրիչ: Դա է պատճառը, որ, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածի երկրորդ մասն ամբողջապես նվիրված է հրապարակայնության սկզբունքին: Այն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ, որի 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի (...) հրապարակային (...) քննության իրավունք:

Հրապարակայնության ապահովման հարցում էական դերակատարում ունեն լրագրողները (լրատվամիջոցները): Նրանց դերը բացառիկ է ժողովրդավարական հասարակություններում՝ հանրային շահի սպասարկման գործում, և այդ պատճառով լրագրողները արտահայտվելու ազատության լայն իրավունք ունեն: Դրան անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-997 որոշմամբ՝ նշելով. «Իրենց աշխատանքն իրականացնելիս լրագրողներն օգտվում են արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության լայն շրջանակից, ինչը պայմանավորված է հասարակության մեջ նրանց ունեցած դերով»:

Այս հետազոտությամբ փորձ է արվել վերլուծել Հայաստանի Հանրապետությունում դռնբաց դատական նիստերի լուսաբանման ընթացքում ծագող խնդիրները, դրանց պատճառներն ու օրենսդրական հիմքերը: Հետազոտության նպատակն է վերհանել առկա խնդիրները և ներկայացնել առաջարկություններ ու հանձնարարականներ՝ դռնբաց դատական նիստերի լուսաբանումը, հատկապես

լուսանկարահանում ու տեսանկարահանում իրականացնելու իրավունքն օրենսդրորեն ամրապնդելու համար:

Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է դռնբաց դատական նիստերի լուսաբանման վերաբերյալ միջազգային և ներպետական օրենսդրությունների համեմատական վերլուծության և Հայաստանի Հանրապետությունում առկա պրակտիկայի ուսումնասիրման հիման վրա: Պրակտիկայի ուսումնասիրման նպատակով իրականացվել են և՛ խորքային հարցազրույցներ, և՛ առցանց հարցումներ:

Այսպես, դռնբաց դատական նիստերի լուսաբանման ընթացքում հանդիպող խոչընդոտների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցման են ենթարկվել ոլորտը լուսաբանող գրեթե բոլոր լրագրողները (42 հոգի): Խորքային հարցազրույցներ են անցկացվել դատական նիստեր մշտապես լուսաբանող 12 լրագրողների հետ, ովքեր 5-25 տարվա աշխատանքային փորձ ունեն այս ոլորտում: Իսկ առցանց հարցումներն անցկացվել են դատական նիստեր լուսաբանող 30 լրագրողների հետ:

Խորքային հարցազրույցներին մասնակցած լրագրողների ցանկը՝ ըստ դատական նիստեր լուսաբանելու փորձառության.

Ռուզան Մինասյան, «Առավոտ» օրաթերթ (www.aravot.am), դատական նիստեր լուսաբանում է սկսած 1993 թվականից,

Սառա Պետրոսյան, «Հետք» առցանց օրաթերթ (www.hetq.am), դատական նիստեր լուսաբանում է սկսած 1995 թվականից,

Ժաննա Ալեքսանյան, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպություն, (www.forrights.am), դատական նիստեր լուսաբանում է սկսած 1995 թվականից,

Սյուզան Սիմոնյան, www.factor.am, դատական նիստեր լուսաբանում է սկսած 1996 թվականից,

Զարուհի Մեջլումյան, «Հետք» առցանց օրաթերթ (www.hetq.am), դատական նիստեր լուսաբանում է սկսած 2003 թվականից,

Արման Սուլեյմանյան, www.paratv.am, դատական նիստեր լուսաբանում է սկսած 2007 թվականից,

Սուսաննա Պողոսյան, «A1+» հեռուստաընկերություն (www.a1plus.am), դատական նիստեր լուսաբանում է սկսած 2008 թվականից,

Արման Վեզիրյան, «Հելսինկյան Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, (www.hrtv.am), դատական նիստեր լուսաբանում է սկսած 2008 թվականից,

Աստղիկ Կարապետյան, www.iravaban.net, դատական նիստեր լուսաբանում է սկսած 2011 թվականից,

Թագուհի Մելքոնյան, «Երկիր» առցանց օրաթերթ (www.yerkir.am), դատական նիստեր լուսաբանում է սկսած 2012 թվականից,

Թեհմինե Ենոքյան, www.lragir.am, դատական նիստեր լուսաբանում է սկսած 2013 թվականից,

Տաթև Խաչատրյան, «Հայկական ժամանակ» օրաթերթ (www.armtimes.am) , դատական նիստեր լուսաբանում է սկսած 2013 թվականից:

ԳԼՈՒԽ I Իրավական փաստաթղթերի վերլուծություն

1.1 Դատական գործերի հրապարակայնության վերաբերյալ միջազգային փաստաթղթերը և միջազգային փորձը

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթերը: Դրանով իսկ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքը, որն իր մեջ պարունակում է հրապարակային դատաքննության իրավունքը: ՀՀ Սահմանադրությունն իր հերթին նախանշել է ՀՀ վավերացրած մրջազգային փաստաթղթերի դերը ՀՀ օրենսդրությունում՝ սահմանելով, որ «Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը» (5-րդ հոդվածի 3-րդ մաս):

Եվրոպական իրավունքի ոլորտում մարդու իրավունքները սահմանող երեք հիմնական միջազգային փաստաթղթերն են Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիան և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը: Տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքը հռչակվում է Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի 10-րդ և 11-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 14-րդ հոդվածներով:

Որպես Միացյալ Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) անդամ (1992 թ.-ից)՝ Հայաստանը միացել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, որի

Հոդված 10-ում հռչակվում է. «Յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիմունքով իրավունք ունի այն բանի, որ իր գործը քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից *հրապարակայնորեն* և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ»: Հռչակագրի 11-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի անմեղ համարվելու մինչև այն պահը, քանի դեռ նրա մեղքը օրինական կարգով չի հաստատվի *հրապարակային* դատական քննության միջոցով, որի ժամանակ նրան տրվում են պաշտպանության բոլոր հնարավորությունները»:

Հայաստանը վավերացրել է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (1993թ.-ին), որի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. «Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու *հրապարակավ* քննության իրավունք: Մամուլին ու հասարակությանը կարող է թույլ չտրվել մասնակցել ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի մասնավոր կյանքի շահերը կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կվնասի արդարադատության շահերը՝ այն չափով, որչափ դատարանի կարծիքով, դա խիստ անհրաժեշտ է, սակայն քրեական կամ քաղաքացիական գործի վերաբերյալ ցանկացած դատական որոշում պետք է հրապարակային լինի, բացառությամբ այն

դեպքերի, երբ անչափահասների շահերը պահանջում են այլ բան կամ գործը վերաբերվում է ամուսնական վեճերին կամ երեխաների խնամակալությանը»:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն 2007թ.-ին մշակել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի մեկնաբանություն: Անդրադառնալով դատական գործի քննության հրապարակայնությանը՝ Կոմիտեն նշել է, որ քրեական գործերով կամ որևէ քաղաքացիական վարույթով բոլոր դատական քննությունները սկզբունքորեն պետք է քննվեն բանավոր և լինեն հասարակության համար բաց (*հրապարակային*): Մեկնաբանություններում նաև նշված է, որ դատաքննության հրապարակայնությունն ապահովում է դատավարության թափանցիկությունը, այդպիսով ծառայեով որպես անհատների և ընդհանուր հասարակության շահերի կարևոր երաշխիք: Դատարանները պետք է հանրությանը տեղեկացնեն դատական քննության անցկացման ժամանակի և վայրի մասին և ապահովեն հասարակության շահագրգիռ անդամների համար անհրաժեշտ պայմաններ դատաքննությանը ներկա գտնվելու համար՝ ի թիվս այլնի (inter alia) հաշվի առնելով, մասնավորապես, գործի նկատմամբ հանրային հետաքրքրությունը և դատական նիստի տևողությունը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն անդրադարձել է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթին, որ մամուլին ու հասարակությանը կարող է թույլ չտրվել մասնակցել ողջ դատաքննությանը կամ նրա որևէ փուլին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության նկատառումներով, կամ երբ այդ պահանջում են կողմերի մասնավոր կյանքի շահերը կամ էլ հատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կվնասի արդարադատության շահերը՝ այն չափով, որչափ դատարանի կարծիքով, դա խիստ անհրաժեշտ է: Կոմիտեն մեկնաբանել է, որ այդպիսի հատուկ հանգամանքների բացակայության դեպքում դատաքննությունը պետք է բաց լինի լայն հասարակության, ներառյալ՝ լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, և

չպետք է, օրինակ, սահմանափակվի որոշակի անձանց շրջանակով: Անգամ այն դեպքերում, երբ հանրությունը զրկված է դատական քննության հասանելիությունից, դատարանի որոշումը, ներառյալ՝ հիմնական եզրահանգումները, ապացույցները և իրավական հիմնավորումները, պետք է լինեն հրապարակային (հանրայնացվեն)՝ բացառությամբ այն դեպքերի երբ անչափահասների շահերի պաշտպանությունն այլ բան կպահանջի կամ երբ դատական վեճը կվերաբերի ամուսնական վեճերին կամ երեխաներ խնամակալությանը (որդեգրմանը):

Հայաստանը՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիան (2002 թ.-ին), որի 6-րդ հոդվածը հռչակում է արդար դատաքննության իրավունքը: ՄԻԵԿ 6-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և *հրապարակային* դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում (…)»:

Կոնվենցիան նախատեսում է նաև թույլատրելի սահմանափակումներ՝ նշելով. «(…) սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը»:

Զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ R (2003) 13 Հանձնարարականով Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն սահմանել է զանգվածային

լրատվամիջոցներով քրեական վարույթի լուսաբանման սկզբունքները: Հանձնարարականում նշվում է, որ հասարակությունը պետք է կարողանա լրատվամիջոցներով ստանալ տեղեկություններ դատական իշխանության և ոստիկանական գործունեության մասին: Ուստի, *լրագրողները պետք է կարողանան ազատորեն լուսաբանել քրեական արդարադատության համակարգի (իրավապահ մարմինների, դատարանի) գործունեությունը*, որը ենթակա է սահմանափակումների միայն Հանձնարարականով նախատեսված սկզբունքների պահպանման համար: Այդ սկզբունքներն են.

- ***Անմեղության կանխավարկածը***

  անմեղության կանխավարկածի սկզբունքը հարգելը և պահպանելը արդար դատավարության անբաժանելի մասն է: Ուստի, քրեական վարույթի վերաբերյալ տեղեկատվությունը և կարծիքները լրատվամիջոցները պետք է տարածեն միայն այն դեպքում, երբ դա չի խոչընդոտում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածին:

- ***Հաղորդվող տեղեկությունների ճշգրտությունը***

  դատական մարմինները և ոստիկանությունը պետք է ապահովեն, որպեսզի ԶԼՄ-ները ստանան միայն հավաստի տեղեկություններ կամ տեղեկատվություն, որը հիմնված է ողջամիտ ենթադրությունների վրա:

- ***Տեղեկատվության մատչելիություն***

  երբ առկա է քրեական վարույթի վերաբերյալ օրենքով չարգելված տեղեկատվություն, դատական մարմինները և ոստիկանությունը պետք է մատչելի դարձնեն այդ տեղեկատվությունը բոլոր լրագրողների համար՝ առանց խտրականության:

- ***ԶԼՄ-ներին տեղեկատվություն տրամադրելու ձևերը***

  երբ դատական մարմինները և ոստիկանությունը տեղեկատվություն են տրամադրում քրեական վարույթի վերաբերյալ, այդ տեղեկատվությունը

պետք է տրամադրվի ոչ խտրական հիմունքներով՝ մամուլի հաղորդագրությունների, մամուլի ասուլիսների, լիազորված աշխատակիցների կամ նմանատիպ այլ միջոցներով:

- ***Քրեական վարույթի ընթացքում տեղեկատվության պարբերաբար տրամադրում***

  այն դեպքերում, երբ քրեական գործում առկա է հանրային շահ կամ քրեական գործը հասարակության ուշադրության կենտրոնում է, դատական մարմինները և ոստիկանությունը պետք է տեղեկացնեն լրատվամիջոցներին տվյալ քրեական գործով իրենց հիմնական գործողությունների վերաբերյալ՝ պահպանելով նախաքննության գաղտնիությունը: Այն դեպքերում, երբ քրեական գործի վարույթը երկար ժամանակ է շարունակվում, գործի վերաբերյալ տեղեկությունը պետք է տրամադրվի պարբերաբար:

- ***Տեղեկատվության շահագործման արգելքը***

  դատական մարմինները և ոստիկանությունը չպետք է շահագործեն քրեական գործի վերաբերյալ տեղեկությունները առևտրային կամ այլ նպատակով, եթե դա սահմանված չէ օրենքով:

- ***Անձնական կյանքի գաղտնիության իրավունքի պաշտպանությունը***

  կասկածյալի, մեղադրյալի կամ քրեական վարույթի այլ մասնակիցների վերաբերյալ տեղեկություն հրապարակելիս պետք է հարգել այդ անձանց անձնական կյանքի իրավունքը, առանձնապես, երբ խոսքը գնում է անչափահասների կամ այլ խոցելի անձանց մասին, ինչպես նաև զոհերի, վկաների և նրանց ընտանիքների մասին:

- ***Հերքման և պատասխանի իրավունք***

  լրատվամիջոցի կողմից քրեական վարույթի վերաբերյալ տեղեկության տարածման դեպքում հրապարակման յուրաքանչյուր սուբյեկտ պետք է իրավունք ունենա հերքելու կամ շտկելու իր մասին հրապարակման մեջ

տեղ գտած սխալ կամ զրպարտիչ տեղեկությունը: Այս իրավունքը պետք է իրագործելի լինի նաև դատական մարմինների և ոստիկանության տարածած հաղորդագրություններում սխալ տեղեկատվության դեպքում:

- ***Վնասակար ազդեցության կանխարգելում***

  քրեական գործի համատեքստում դատական մարմինները և ոստիկանությունը պետք է ձեռնպահ մնան այնպիսի տեղեկատվություն հրապարակելուց, որը էական վնաս կարող է հասցնել արդար դատավարության իրականացմանը:

- ***Մինչդատական վարույթի վնասակար հրապարակայնություն***

  եթե մեղադրյալը ցույց է տալիս, որ մինչդատական վարույթում որևէ տեղեկության տրամադրումը (հրապարակումը) խախտում է կամ կարող է խախտել արդար դատավարության իր իրավունքը, ապա նա պետք է ունենա արդյունավետ իրավական պաշտպանության միջոց այդ տեղեկության հրապարակումը կանխելու համար:

- ***Լրագրողների համար հասանելիություն (ազատ մուտքի թույլտվություն)***

  լրագրողները պետք է դռնբաց դատական նիստերին և վճիռների հրապարակմանը ներկա գտնվելու հնարավորություն ունենան, առանց խտրականության և առանց նախնական հավատարմագրման պահանջների: Լրագրողներին չպետք է արգելել ներկա գտնվել դատական նիստերին՝ բացառությամբ դռնփակ դատական նիստերի:

- ***Դատական դահլիճի հասանելիությունը լրագրողների համար***

  իրավասու մարմինները, եթե դա ակնհայտորեն անիրագործելի չէ, պետք է դատարանի դահլիճում համապատասխան բավարար տեղեր հատկացնեն լրագրողներին՝ որպես այդպիսին առանց բացառելու հասարակության ներկայությունը:

- ***Հաղորդումներ դատական դահլիճից և ձայնագրում***

դատական դահլիճից հաղորդումները կամ ձայնագրումը պետք է հնարավոր լինի միայն այն դեպքում, եթե դա թույլատրված է օրենքով կամ դատարանի կողմից: Նման հաղորդումները պետք է թույլատրվեն միայն այն դեպքում, երբ բացակայում է վտանգը, որ այդ հաղորդումներն անհարկի ազդեցություն կգործեն քրեական վարույթի մասնակիցների (վկաների, տուժողի, վարույթի այլ կողմերի) վրա:

- ***Աջակցություն լրատվամիջոցների գործունեությանը***

  կայանալիք դատական նիստերի մասին տեղեկությունները, նիստին ներկա գտնվելու համար անհրաժեշտ այլ պահանջների վերաբերյալ տեղեկությունները պետք է մատչելի լինեն լրագրողների համար և սահմանված ժամկետում հրապարակվեն իրավասու մարմինների կողմից: Լրագրողներին առանց խտրականության պետք է թույլատրվի կատարել կամ ստանալ հրապարակայնորեն ներկայացված վճիռների պատճենները: Նրանք պետք է հնարավորություն ունենան տարածելու այդ վճիռները հանրության համար:

- ***Վկաների պաշտպանություն***

  վկաների ինքնությունը կարելի է բացահայտել միայն վկայի համաձայնությամբ կամ եթե դա բխում է հանրային շահից կամ վկայի ցուցմունքն արդեն հրապարակվել է: Վկայի ինքնությունը չպետք է բացահայտվի, եթե դա սպառնում է նրա կյանքին կամ անվտանգությանը:

- ***Դատավճռի կատարման վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանումը***

  լրագրողներին պետք է թույլատրվի կապ պահել ազատազրկվածի հետ, բացառությամբ եթե դա խոչընդոտում է արդարադատության իրականացմանը կամ կարող է խախտել ազատազրկվածի, իրավապահ մարմինների ներկայացուցիչների իրավունքները կամ անվտանգությունը:

Լրատվամիջոցների լուսաբանումը պատժի ավարտից հետո

ազատազրկված անձանց պատժի ավարտից հետո հասարակության հետ ինտեգրվելուն չվնասելու նպատակով այդ անձանց ինքնությունը պետք է գաղտնի լինի, բացառությամբ եթե այդ անձինք համաձայնել են բացահայտել իրենց ինքնությունը կամ նրանց կատարած հանցանքն ունի հանրային նշանակություն:

Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայով և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով, ինչպես նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի կողմից տրված՝ Դաշնագրի 14-րդ հոդվածի մեկնաբանություններով և ԵԽ նախարարների կոմիտեի հանձնարարականով սահմանվում է դատական գործերի դատական նիստերի հրապարակայնության, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցների համար դատական նիստերի մատչելիության և հրապարակայնության, ինչպես նաև դատական քննության վերաբերյալ լայն հասարակությանը տեղեկացնելու կանոնը:

Հրապարակային համարվող և հատուկ հանգամանքներով չսահմանափակված դատական նիստերին լրագրողների ներկայությունը սահմանելը ենթադրում է, որ այդպիսով սահմանվում է նաև դատական քննության լուսաբանման՝ լրագրողական գործունեություն իրականացնելու իրավունք: Անիմաստ է ենթադրել, որ դատական նիստերին լրագրողների ներկայության իրավունքը սահմանելիս միաժամանակ ակնկալվել է, որ լրագրողը պետք է հանդես չգա որպես լրագրող և չլուսաբանի դատաքննությունը:

Միաժամանակ, միջազգային փաստաթղթերը չեն անդրադառնում դատական քննության լուսաբանման համար լրագրողների կողմից կիրառվող գործիքակազմին, վերոնշյալ միջազգային փաստաթղթերը չեն բացահայտել լրագրողների իրավունքների իրականացման (լուսաբանման) ձևերը (սղագրություն,

տեսանկարահանում կամ լուսանկարահանում և այլն): Հետևաբար, լրագրողները պետք է կարողանան ազատորեն լուսաբանել դատական քննությունը (դատական նիստը), այդ թվում՝ ազատորեն ընտրեն լուսաբանման միջոցները: Այս համատեքստում պետք է մի կողմից հաշվի առնել, որ դատական քննությանը (նիստին) ներկա գտնվող լրագրողի գործունեության իրականացման գործիքներից լուսանկարահանումը և տեսանկարահանումն են առավել շատ քննարկման առարկա դառնում պրակտիկայում և օրենսդրորեն, մյուս կողմից՝ պետք է պարտադիր հաշվի նստել մարդկության զարգացման, գիտության և տեխնիկայի զարգացման, ինչպես նաև համացանցի ընձեռած հնարավորությունների շնորհիվ տեղեկության տարածման և փոխանակման արագության հետ:

Ոչ վաղ անցյալում ընդունված պրակտիկա էր, որ դատարանի դահլիճում լուսանկարելը և հեռարձակումը սահմանափակվում է ամբողջ աշխարհում: Օրենքները տարբեր երկրներում սահմանափակում էին դատական նիստերը լուսանկարահանելու և տեսանկարահանելու՝ լրատվամիջոցների իրավունքը, որոշներում՝ առհասարակ գործում էր դատական նիստի լուսանկարահանման և տեսանկարահանման լրիվ ազելք: Սակայն, ակնհայտորեն դատական նիստերը լուսանկարահանելու և տեսանկարահանելու արգելքի անհրաժեշտության և իմաստի նկատմամբ մոտեցումները համացանցի, գիտության և տեխնիկայի զարգացման պայմաններում փոխվում են:

Դատարանի դահլիճում լուսանկարելը և հեռարձակումը սահմանափակելու մոտեցման փոփոխությունը բավականին ցայտուն երևում է Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինակով: 1965 թվականին ԱՄՆ Գերագույն դատարանն Էստեսն ընդդեմ Տեխասի գործով[1] հայտնեց հետևյալ դիրքորոշումը. «Հեռուստատեսությունը, ինչպես այլ ինստիտուտները, ունի իր գործունեության և սահմանափակումների պատշաճ շրջանակ, որից չի կարող անցնել իր տեսախցիկներով: Այդ շրջանակը չի

[1] Estes v. Texas, 381 U.S. 532 (1965), https://supreme.justia.com/cases/federal/us/381/532/.

տարածվում ամերիկյան դատարանի վրա: Մուտք գործելով այդ սրբազան վայր, որտեղ վտանգի տակ են մարդկանց կյանքը, ազատությունը և սեփականությունը, հեռուստաընկերությունների ներկայացուցիչները ունեն միայն ընդհանուր հասարակության իրավունքներ, մասնավորապես՝ ներկա գտնվել, հետևել դատավարությանը, ապա, եթե ցանկանան, տեղեկացնել այդ մասին»: Արդեն 1981 թվականին Չանդլերն ընն դեմ Ֆլորիդայի գործով[2] ԱՄՆ Գերագույն դատարանը դիրքորոշում հայտնեց, որ դատաքննությունների հեռարձակումը հեռուստատեսությամբ (televising) ըստ էության (per se) չի խախտում օրենքով սահմանված կարգը (օրենսդրական երաշխիքները, due process): 1991-1994 թվականների ընթացքում արդեն որոշ դաշնային դատարանների դահլիճներում փորձարկվեցին տեսախցիկներ՝ իրականացնելով դատական քննությունների հեռարձակում: Որոշ դեպքերում, հեռարձակվում են նաև ատենակալների քննարկումները:

Դատարանի դահլիճում լուսանկարելը և հեռարձակումը սահմանափակելու մոտեցման փոփոխությունը ներկայացնող մեկ այլ օրինակ է Միացյալ Թագավորությունը: Քրեական արդարադատության մասին 1925 թվականի ակտի 41-րդ մասով[3] Միացյալ Թագավորության Թագավորական դատարանում[4] արգելվում էր լուսակարահանումը և հեռարձակումը (ակտի տերմինաբանությամբ՝ արգելվում էր լուսանկարելը, դիմապատկեր կամ ուրվապատկեր նկարելը): 2004 թվականին, երբ Վերաքննիչ դատարանում մի քանի գործերով նկարահանվեցին դատական քննությունները, նույն ժամանակահատվածում այլ դատարաններում նույնպես սկսեց թույլատրվել լուսա/տեսակնարահանումը: 2009 թվականից արդեն Միացյալ Թագավորության Գերագույն դատարանը թույլատրեց դատական նիստերի

[2] Chandler v. Florida, 449 U.S. 560 (1981), https://supreme.justia.com/cases/federal/us/449/560/.

[3] Criminal Justice Act 1925, https://www.legislation.gov.uk/ukpga/Geo5/15-16/86/section/41.

[4] Վերաքննիչ դատարանի եւ Արդարադատության Վերին ատյանի դատարանի հետ միասին կազմում են Անգլիայի և Ուելսի Գլխավոր դատարանները (Senior Courts of England and Wales)

նկարահանումը, իսկ Վերաքննիչ դատարանը 2013 թվականից թույլատրեց դատական նիստերի նկարահանումը կանոնավոր կերպով (on regular basis)[5]:

Վերոնշյալ միջազգային փորձը ցույց է տալիս, որ հաշվի առնելով հեռուստատեսության, էլեկտրոնային լրատվության զարգացումը, համացանցի առկայության պարագայում տեղեկության փոխանակման արագությունը՝ պետությունները հրաժարվում են դատական նիստերի լուսանկարահանումը և տեսանկարահանումը արգելելու ընդհանուր կանոնից, նախատեսում են դատական նիստերի հեռարձակման կանոններ՝ միայն բացառիկ դեպքերում սահմանափակելով դատական քննության լուսա/տեսանկարահանումը:

1.2 Ներպետական օրենսդրությունը

Արդար դատաքննության իրավունքը՝ ներառյալ գործի հրապարակային քննության իրավունքը, ամրագրված է ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածով, որի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի (...) հրապարակային (...) քննության իրավունք»: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսել է գործի քննության հրապարակայնության թույլատրելի սահմանափակումների շրջանակը. «Դատական վարույթը կամ դրա մի մասը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, անչափահասների կամ արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով»:

[5] Տես՝ http://www.bbc.com/news/uk-35854485

Սահմանադրական այս նորմը առարկայացել է դատական իշխանության գործունեությունը կարգավորող և դատավարությունների առանձնահատկությունները կարգավորող իրավական ակտերում՝ ՀՀ դատական օրենսգրքում, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում, ՀՀ քրեական դատավարության, ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերում:

Դատական գործերի հրապարակայնության ընդհանուր կանոն սահմանված է ՀՀ դատական օրենսգրքի 20-րդ հոդվածով, որի համաձայն «Հայաստանի Հանրապետության դատարաններում գործերի քննությունը դռնբաց է: (…): Գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասը հրապարակվում է դատարանի դռնբաց նիստում: (…): Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ծանոթանալու դատական գործին, որով գործն ըստ էության լուծող դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ (…)»: Նույն հոդվածը սահմանում է նաև դատական գործերի հրապարակայնության սահմանափակման ընդհանուր կանոնը. «Դատական քննությունը կամ դրա մի մասն անցկացվում է դռնփակ՝ միայն դատարանի որոշմամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով: Որդեգրման գործերով որդեգրողի պահանջով դատական քննությունն անցկացվում է դռնփակ: (…) Որդեգրման գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասը կարող է հրապարակվել միայն որդեգրողի համաձայնությամբ: (…) Գործի՝ դռնփակ նիստում քննված մասին և որդեգրման գործին անձը կարող է ծանոթանալ միայն դատական ակտը կայացրած դատարանի որոշմամբ»:

Տարբեր դատարաններում գործերի քննության կամ դատավարություններում հրապարակայնության առանձնահատկությունները կարգավորվում են տվյալ

դատարանի գործունեությունը կարգավորող կամ տվյալ դատավարության առանձնահատկությունները սահմանող իրավական ակտով:

Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թվականի հունիսի 1-ի ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է, որ *հրապարակայնությունը* Սահմանադրական դատարանում գործերի քննության հիմնական սկզբունքներից է: Նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանվել են ՀՀ սահմանադրական դատարանում գործերի հրապարակայնության կանոնները. «Գործի դատաքննությունը դռնբաց է, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: (...) Սահմանադրական դատարանի ըստ էության որոշման, ինչպես նաև եզրակացության Եզրափակիչ մասը բոլոր դեպքերում հրապարակվում է դռնբաց նիստում»: Նույն հոդվածով սահմանվում են գործերի քննության հրապարակայնության բացառությունները. «(…) Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը սահմանադրական դատարանի նիստերին կամ դրանց մի մասին կարող է արգելվել սահմանադրական դատարանի որոշմամբ՝ սահմանադրական դատարանի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության որևէ կողմի միջնորդությամբ գործի դատաքննությունը դռնփակ նիստում անցկացնելու հարցը նույնպես քննվում և լուծվում է դռնփակ նիստում: Դռնփակ նիստում ներկա գտնվելու իրավունք ունեն դատավարության կողմերը, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները: Դռնփակ նիստին ներկա անձինք սահմանադրական դատարանի կողմից նախազգուշացվում են դռնփակ նիստում իրենց հայտնի դարձած տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվության մասին»:

Նույն հոդվածն անդրադառնում է նաև ՀՀ Սահմանադրական դատարանում իրականացվող դատաքննությունը տեսագրելուն և հեռարձակելուն՝ նշելով, որ «(…) Գործի դատաքննության ընթացքը կարող է գրառվել, ձայնագրվել: Դատաքննությունը կարող է տեսագրվել և հեռարձակվել սահմանադրական դատարանի որոշմամբ (…)»:

Քրեական գործերի դատական քննության հրապարակայնության առանձնահատկությունները սահմանված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածով: Օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանում է քրեական գործերի հրապարակայնությունը. «(…) Քրեական գործերի դատական քննությունը բոլոր դատարաններում դռնբաց է, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված դեպքերի: (…) Դատարանների դատավճիռները և այլ վերջնական որոշումները հայտարարվում են հրապարակայնորեն: Դռնփակ դատական քննություն անցկացնելու դեպքում դատարանի որոշման հիման վրա կարող են հրապարակայնորեն հայտարարվել դատավճռի կամ այլ վերջնական որոշման միայն ներածական և եզրափակիչ մասերը. չեն հրապարակվում այն մասերը, որոնք հիմք են հանդիսացել դռնփակ դատական քննություն անցկացնելու համար»: Նույն հոդվածը սահմանում է նաև բացառությունները. «(…) Դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել պետական և ծառայողական գաղտնիքների հետ առնչվող հանցագործությունների գործերով: Դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդությամբ բացառիկ դեպքերում, եթե դա չի վնասի արդարադատության իրականացմանը կամ չի հանգեցնի դատավարության հրապարակայնության սկզբունքի չարդարացված սահմանափակմանը, դատարանի որոշմամբ դռնփակ դատական քննություն կարող է անցկացվել նաև՝

1) անձնական և ընտանեկան կյանքին, անձի պատվին և արժանապատվությանն առնչվող հանցագործությունների վերաբերյալ գործերով.

2) անձի սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով.

3) քրեական դատավարությանը մասնակցող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների պաշտպանության անհրաժեշտության դեպքում:

Դատարանը դռնփակ դատական քննություն կարող է անցկացնել նաև ազգային անվտանգության և հասարակական կարգի պաշտպանության նկատառումներով, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում: Եթե դատարանի որոշմամբ լրատվական գործունեություն իրականացնողին կամ լրագրողին պարտադրվում է բացահայտել տեղեկատվության աղբյուրը, ապա լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի միջնորդությամբ դատական քննությունն իրականացվում է դռնփակ: Դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին դատարանի որոշումը կարող է կայացվել ամբողջ դատական քննության կամ դրա համապատասխան մասի վերաբերյալ: Դռնփակ դատական քննությունն անցկացվում է քրեական դատավարության նորմերի պահպանմամբ»:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ուղղակիորեն չի նախատեսում լրագրողների՝ քրեական գործերով նիստերի լուսա/տեսանկարահանման իրավունքը, այլ յուրաքանչյուր գործով լուսանկարահանում և տեսանկարահանում կատարելու թույլտվությունը տալիս է դատավորը:

Քաղաքացիական գործերով դատական քննության հրապարակայնությունը սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ և 114-րդ հոդվածներով: Օրենսգրքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ «Դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է: (…): Դատարանի վճիռը բոլոր դեպքերում հրապարակվում է դռնբաց նիստում, բացառությամբ որդեգրման գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասի հրապարակման դեպքերի: Որդեգրման գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ

մասը կարող է հրապարակվել միայն որդեգրողի համաձայնությամբ»: Նույն հոդվածով սահմանվում են գործերի քննության հրապարակայնության կանոնից բացառությունները՝ «(…) Գործի քննությունը դռնփակ նիստում թույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում, ինչպես նաև որդեգրման գաղտնիությունը, քաղաքացիների անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն ապահովելու, առևտրային կամ այլ գաղտնիք պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից բավարարվելու դեպքում: Գործը դռնփակ նիստում քննելու մասին կայացվում է որոշում: Գործը դռնփակ նիստում քննելիս ներկա են գտնվում գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները, որոնցից վերցվում է ստորագրություն՝ բացահայտված գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին: Դռնփակ նիստում գործի քննությունն իրականացվում է քաղաքացիական դատավարության կանոնների, պետական, ծառայողական, առևտրային, բանկային և այլ գաղտնիքների մասին օրենսդրության պահանջների պահպանմամբ (…)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ մասն անդրադառնում է նիստի լուսա/տեսանկարահանմանը. «(…) Գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն: Դատական նիստի կինո և լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով ու հեռուստատեսությամբ կատարվում են կողմերի համաձայնությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ և 100-րդ հոդվածներով կարգավորվում է վարչական գործերով դատական քննության հրապարակայնությունը: Օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանում գործերի քննությունը դռնբաց է: (…) Գործն ըստ էության լուծող դատական ակտի

եզրափակիչ մասը հրապարակվում է դատարանի դռնբաց նիստում: Որդեգրման գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտի եզրափակիչ մասը կարող է հրապարակվել միայն որդեգրողի համաձայնությամբ (…)»: Նույն հոդվածը սահմանում է գործերի քննության հրապարակայնության բացառությունները. «(…) Դատական քննությունը կամ դրա մի մասն անցկացվում է դռնփակ միայն դատարանի որոշմամբ՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով: Որդեգրողի պահանջով որդեգրման գործերին առնչվող դատական քննությունն անցկացվում է դռնփակ: Դռնփակ նիստում գործի քննությունն իրականացվում է պետական, ծառայողական, առևտրային, բանկային և այլ գաղտնիքների մասին օրենքների պահանջների պահպանմամբ: (…) Գործը դռնփակ նիստում քննելիս ներկա են լինում դատական նիստի քարտուղարը, դատավարության մասնակիցները, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները, որոնցից վերցվում է ստորագրություն՝ բացահայտված գաղտնի տեղեկությունները չհրապարակելու և չօգտագործելու մասին, և որոնք նախազգուշացվում են բացահայտված գաղտնի տեղեկությունները հրապարակելու կամ օգտագործելու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածը սահմանում է վարչական գործերի քննության տեսաձայնագրումը, լուսանկարահանումը և հեռարձակումը. «(…) Դատավարության մասնակիցները և դռնբաց դատական նիստին ներկաներն իրավունք ունեն կատարելու գրառումներ, սղագրություն և ձայնագրություն: Դատական նիստերի դահլիճ դատավորի մտնելու պահից դահլիճում արգելվում է լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, հեռարձակումը: Դատական նիստի լուսանկարահանումը, տեսաձայնագրումը, ինչպես նաև հեռարձակումը ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ համացանցով կատարվում են

դատավարության մասնակցի միջնորդությամբ՝ գործը քննող դատարանի թույլտվությամբ»:

Վերոնշյալ իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության դատարաններում գործերի քննությունը որպես կանոն դռնբաց է, իսկ գործերի դռնփակությունը բացառություն է, որը կարող է վրա հասնել միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում և ձևով: Այս կանոնը ճիշտ է բոլոր դատարանների և բոլոր դատավարությունների համար:

Այնինչ, տարբեր դատարաններում դատական քննության (դատական նիստի) լուսաբանման տարբեր կանոններ են գործում: Այսպես, սահմանադրական, քաղաքացիական և վարչական գործերով դատական քննության ժամանակ նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն, այնինչ քրեական դատավարության օրենսգրքում նիստին ներկա գտնվողների նման իրավունքն ամրագրված չէ:

Էականորեն տարբերվում են դատական քննության ժամանակ նիստին ներկա գտնվողների՝ դատաքննությունը լուսանկարահանելու, տեսաձայնագրելու կամ հեռարձակելու իրավունքների սահմանները: Այսպես, ՀՀ Սահմանադրական դատարանում դատաքննությունը տեսագրելու և հեռարձակելու իրավունքից կարող են օգտվել պայմանով՝ սահմանադրական դատարանի որոշմամբ, վարչական գործերով առհասարակ դատաքննությունը լուսանկարահանելը, տեսաձայնագրելը, ինչպես նաև հեռարձակելն ի սկզբանե արգելված է և կարող է թույլատրվել դատարանի կողմից, եթե առկա է դատավարության մասնակցի միջնորդությունը, իսկ քաղաքացիական գործերով նիստին ներկա գտնվողները դատաքննությունը կինո և լուսանկարահանելու, տեսաձայնագրելու, ինչպես նաև հեռարձակելու իրավունքից կարող են օգտվել պայմանով՝ կողմերի համաձայնությամբ և դատարանի թույլտվությամբ:

ԳԼՈՒԽ II Հայաստանյան արդի պրակտիկա

2.1 *Դատական նիստեր լուսաբանող լրագրողների հետ խորքային հարցազրույցների վերլուծություն*

Դատական նիստերի լուսաբանումն այսօր հայաստանյան բազմաթիվ լրատվամիջոցների և լրագրողների ամենօրյա աշխատանքի մի մասն է: Սկսած 2000ական թվականներից դատական համակարգը և տարատեսակ դատավարություններն աստիճանաբար ավելի շատ ուշադրության են արժանանում լրատվամիջոցների և հանրության կողմից: Եթե 1990ականներին դատական նիստեր լուսաբանող լրագրողներին կարելի էր մեկ ձեռքի մատների վրա հաշվել, ապա այսօր նրանց թիվն անցնում է մի քանի տասնյակը, ընդ որում, նրանցից շատերը մշտապես և նույնիսկ բացառապես դատական վեճեր են լուսաբանում՝ մասնագիտանալով այս ոլորտում:

Հետազոտության շրջանաներում խորքային հարցազրույցներ են անցկացվել դատական նիստեր մշտապես լուսաբանող 12 լրագրողների հետ, որոնք նվազագույնը 5, առավելագույնը 25 տարվա դատական ոլորտի լուսաբանման փորձ ունեն: Խորքային հարցազրույցներին մասնակցած լրագրողները մեծամասնությունը հիմնականում լուսաբանում են քրեական գործերի դատավարությունները, սակայն վարչական և քաղաքացիական գործեր լուսաբանելու փորձ ևս ունեն:

Լրագրողները դատական նիստերի լուսաբանման խոչընդոտների թվում առանձնացնում և կարևորում են լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնելու խնդիրը: Նույնիսկ այն լրագրողները, ովքեր սովորաբար լուսա/տեսանկարահանում չեն իրականացնում նիստերի դահլիճում, ականատես են եղել, թե ինչպես է դատավորների կողմից սահմանափակվել կամ խոչընդոտվել լուսա/տեսանկարահանման իրավունքը:

«*Լրագրողը որպես իր խոսքերի ապացույց տեսանյութն է ներկայացնում, կայքերի ընթերցողներն էլ են սովորել տեսանյութեր դիտել, միայն կարդալն այլևս բավարար չէ: Սակայն շատ քիչ հեռուստալրագրողներ են գալիս լուսաբանելու դատական նիստերը, քանի որ նկարահանումը հաճախ արգելվում կամ սահմանափակվում է*». Տաթև Խաչատրյան:

Ու թեև արդի տեխնոլոգիական ժամանակաշրջանում դատական նիստերի վերաբերյալ տեսանյութեր պատրաստելու և ուղիղ հեռարձակում ապահովելու տենդենց է նկատվում, որոշ դատավորների դեպքում լրագրողները պարզապես վստահ են, որ լուսա/տեսանկարահանումը արգելվելու կամ սահմանափակվելու է:

«*Տեսանյութն առավել ազդեցիկ է, դա քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու լավագույն գործիքն է: Լրագրողը գաղտնի տեսանկարահանելու բազմաթիվ տարբերակներ գիտի, բայց ինչո՞ւ են մեզ դրդում, որպեսզի մեր օրինական մասնագիտական գործունեությունն անելու համար այդպիսի եղանակների դիմենք*». Արման Վեզիրյան:

2017 թվականի առաջին 10 ամիսներին «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունն արձանագրել է դռնբաց դատական նիստերի լուսա/տեսանկարահանման արգելիք ու սահմանափակման 16 դեպք: Արգելքի կամ սահմանափակման պատճառաբանությունները տարբեր են:

2.1.1 Լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնելու արգելքներն ու դրանց հետ կապված խնդիրները

Ներկայումս գործող օրենսդրության համաձայն, լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնելու թույլտվությունը դատավորն է տալիս, սակայն թե օրենսդրական կարգավորման, թե պրակտիկայում չի գործում մեկ միասնական մոտեցում: Դատավորներից յուրաքանչյուրն առաջնորդվում է իր անձնական մոտեցումներով՝ լրագրողների նկատմամբ ունեցած վերաբերմունքից ելնելով:

«*Այսօր ամեն ինչ որոշում է նախագահող դատավորը: Եթե լրագրողի բախտը բերում է, նախագահող դատավորը հարգում է քեզ և քո աշխատանքը, դու ոչ մի խնդիր չես ունենա*». Աստղիկ Կարապետյան:

Դատական նիստ լուսաբանող լրագրողների համար խնդիրներն առաջանում են սկսած ընթացկարգերից մինչև ամբողջական լուսա/տեսանկարահանում իրականացնելու թույլտվություն ստանալը, քանի որ համապատասխան օրենսդրական ակտերում հստակության պակաս կա: Վարչական դատավարության օրենսգիրքը միակն է, որն անդրադառնում է լուսա/տեսանկարահանում իրականացնելու թույլտվություն ստանալու ընթացակարգին, այն էլ՝ ի վնաս լրագրողների: Օրենքի համաձայն, լրագրողն ինքը չի կարող միջնորդել դատարանին լուսա/տեսանկարահանման թույլտվություն ստանալու համար, այլ դա պետք է անի դատավարության կողմերից որևէ մեկը: Սա նշանակում է, որ եթե դատավարության կողմերից որևէ մեկը չցանկանա դիմել դատավորին նման միջնորդությամբ, ապա լուսա/տեսանկարահանում իրականացնելու հարցը անգամ չի քննարկվի դատարանի կողմից:

«*Հիմա ունենք մի այնպիսի իրավիճակ, երբ լրագրողը ստիպված է իրեն անծանոթ անձանց խնդրել, որպեսզի նա միջնորդի դատարանին իր իրավունքը իրացնելու համար: Սա հիմարության գագաթնակետն է: Ստացվում է, որ մենք արդարադատության թափանցիկությունն ու հանրայնությունը վստահում ենք ինչ-որ քաղաքացու*». Արման Սուլեյմանյան:

Եթե անգամ դատավարության կողմերից որևէ մեկը շահագրռված է, որպեսզի լրատվամիջոցները լուսաբանեն տվյալ գործի քննությունը և միջնորդություն է ներկայացնում դատավորին՝ լուսա/տեսանկարահանում իրականացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ, ապա սա էլ իր հերթին կասկածի տակ է դնում լրագրողի/լրատվամիջոցի անկողմնակալությունը: Այսպիսի խնդիր չի առաջանում ընդհանուր իրավասության և Վերաքննիչ քրեական ու Վերաքննիչ քաղաքացիական դատարաններում, որտեղ լրագրողները ստիպված չեն դիմելու կողմերից որևէ մեկին, որպեսզի վերջինս միջնորդություն ներկայացնի դատարանին լուսա/տեսանկարահանում իրականացնելու թույլտվության վերաբերյալ: Սակայն այստեղ էլ այլ խնդիրներ են ի հայտ գալիս: Քրեական և Քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքերով հստակեցված չէ, թե դատական նիստի ընթացքում լրագրողը ինչ կարգով կարող է դիմել լուսա/տեսանկարահանում իրականացնելու թույլտվություն ստանալու համար: Առկա պրակտիկայի համաձայն, դատական նիստը բացելուց հետո նիստին ներկա լրագրողներն իրենք են դիմում դատավորին՝ խնդրելով թույլատրել լուսա/տեսանկարահանում իրականացնել:

«*Դատավորներ կան, որ տեսնում են դահլիճում լրագրողին, իրենք են նախաձեռնում և կողմերին հարցնում են, արդյո՞ք իրենք առարկում են, որ լրագրողը լուսանկարահանի կամ տեսանկարահանի: Սակայն կան դատավորներ, որոնք անտեսում են քեզ, և ինքդ ես ընդմիջում դատական նիստն ու թույլտվություն հարցնում*». Ռուզան Մինասյան

Լրագրողն ըստ էության միջնորդություն է ներկայացնում, թեև դրա իրավունքը նրան տրված չէ օրենքով: Սա բարդացնում է լրագրողների աշխատանքը, նախ որովհետև ստիպում է նրան ուղիղ հարաբերվել նիստը նախագահող դատավորի հետ՝ առանց դրա իրավունքն ունենալու: Հանդիպում են իրավիճակներ, երբ դատավորը լրագրողին նկատողություն է անում նստած տեղից կանգնելու և խոսելու համար:

«*Միջնորդություն անելու իրավունքը պետք է օրենքով կարգավորվի հակառակ դեպքում լրագրողը դպրոցական պես ձեռք է բարձրացնում, որ միջնորդի նկարահանման համար: Ինձ հետ եղել է դեպք, երբ Վերաքննիչ դատարանում ձեռք եմ բարձրացրել, տարբեր ժեստեր եմ արել, որպեսզի հասկացնեմ, թե ուզում եմ թույլտվություն ստանալ նկարահանման համար, սակայն դատավորը դիտավորյալ անտեսել է ինձ: Նույնիսկ դեպք է եղել, երբ դատավորը լրագրողին նիստերի դահլիճից դուրս է հրավիրել՝ նման ժեստերի համար*». Աստղիկ Կարապետյան:

Երբ լրագրողին հաջողվում է նիստի ընթացքում հնչեցնել իր միջնորդությունը դատավորները դատավարության մասնակիցների կարծիքն են հարցնում միջնորդության վերաբերյալ և որոշում կայացնում: Գործող օրենսդրությունը չի պարտավորեցնում դատավորներին հիմնավորել իրենց որոշումները, ինչը նրանք հիմնականում չեն անում: Իսկ դատավարության մասնակիցները, լուսա/տեսանկարահանում իրականացնելու թույլտվության դեմ առարկելիս, երբեմն ներկայացնում են զավեշտալի պատճառաբանություններ: Օրինակ, ՀՀ ոստիկանության ներկայացուցիչը կարող է առարկել միջնորդության դեմ՝ ասելով, որ ինքը կին է, մայր է և հարս ունի: Կամ մեկ այլ դեպքում, դարձյալ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչն իր առարկությունը պատճառաբանել էր նրանով, թե ինքը չի ուզում,

որ իր լուսանկարը «լայքեն» «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում: Զավեշտալի են դատարանում պետական մարմնի ներկայացուցչի նման պատճառաբանությունները, սակայն առավել զավեշտալի է, որ որոշ դատավորների համար սա հիմք է հանդիսանում, որպեսզի արգելեն լուսա/տեսանկարահանումը: Անգամ արձանագրվել են դեպքեր, երբ դատավորը արգելել է լուսա/տեսանկարահանումն այն պարագայում, երբ կողմերից որևէ մեկը չի առարկում դրա դեմ:

«*Եղել է դեպք, երբ ամբաստանյալն էր ուզում, որպեսզի նկարահանում լինի, սակայն դատախազն առարկեց և դատավորն արգելեց: Նույն գործով երկրորդ նիստին մենք խնդրեցինք դատախազին, որպեսզի նա չառարկի և դատախազը համաձայնեց, սակայն դատավորն ասաց, որ արդեն իսկ որոշված է և նկարահանում չի կարելի*». Աստղիկ Կարապետյան:

Սակայն արձանագրվում են նաև դեպքեր, երբ դատավարության կողմերից որևէ մեկը առարկում է լուսա/տեսանկարահանում իրականացնելու մասին միջնորդության դեմ, սակայն դատավորը չի արգելում դատական նիստի լուսա/տեսանկարահանումը, այլ պարզապես սահմանում է, որ դատավարության տվյալ մասնակցին լուսա/տեսանկարահանելն է արգելված միայն:

2017 թվականին սկսված քաղաքական ենթատեքստ ունեցող դատավարությանն ընթացքում (Ժիրայր Սէֆիլյանի և մյուսների գործով) դատավարության կողմերից մեկը՝ մեղադրող դատախազը, առարկել է վկաների հարցաքննության ժամանակ տեսանկարահանում և նիստի ուղիղ հեռարձակում իրականացնելու դեմ՝ պատճառաբանելով, որ դատարանի դահլիճից դուրս գտնվող վկան կարող է տեսնել իրենից առաջ հարցաքննվող վկայի ցուցմունքն ու ազդվել

դրանից: Դատավորն ընդունել է այս հիմնավորումը և արգելել է վկաների հարցաքննության ժամանակ տեսանկարահանումն ու ուղիղ հեռարձակումը:

«*Դատավորները շատ լարված են աշխատում և վտանգի զգացում ունեն, այդ պատճառով էլ լրագրողների ներկայությունն իրենց համար անցանկալի է*». Ժաննա Ալեքսանյան:

Միևնույն ժամանակ դատավորը վկաների հարցաքննությունը դռնփակ անցկացնելու մասին որոշում չէր կայացրել, հետևաբան չէր կարող արգելել նիստերի ընթացքում ձայնագրառում իրականացնելը: Արդյունքում դատական նիստի ընթացքում վկայի ցուցմունքները հասանելի են դառնում հանրությանը ցուցմունք տալուց ժամեր անց, քանի որ լրագրողներն այնուամենայնիվ, ակտիվորեն լուսաբանում են այս գործը: Հաշվի առնելով, որ վերոնշյալ գործում ներգրավված են մի քանի տասնյակ վկաներ, և գործնականում անհնարին է նրանց բոլորին հարցաքննել միևնույն դատական նիստի ընթացքում:

«*Վկաների հարցաքննությունը պարզապես լավ առիթ է իրենց համար տեսանկարահանումն արգելելու համար: Նիստերից մեկի ժամանակ դեռևս չէր սկսվել վկաների հարցաքննությունը, բայց դատական կարգադրիչները թույլ չէին տալիս, որ մենք ներս մտնենք տեսախցիկներով, ասում էին՝ դատավորն է հրահանգել, բայց դեռ վկաների հարցաքննությունը չէր, այլ պաշտպաններն էին միջնորդություն ներկայացնում*». Սուսաննա Պողոսյան:

Հետևաբար վկաներից ոմանք այսպես թե այնպես հնարավորություն ունենալու են ծանոթանալու մյուս վկաների ցուցմունքներին, ուստի տեսանկարահանումն ու ուղիղ հեռարձակումն արգելելը իրականում չի լուծում մեղադրող դատախազին մտահոգող խնդիրը, սակայն փոխարենը սահմանափակում է հանրության ուշադրության կենտրոնում գտնվող գործերի ամբողջական լուսաբանումը՝ հատկապես վիդեոնյութեր պատրաստող ԶԼՄ-ների համար:

Երբեմն լուսա/տեսանկարահանում իրականացնելու թույլտվության հարցը որոշվում է դատավորի՝ տվյալ լրատվամիջոցի կամ լրագրողի նկատմամբ ունեցած վերաբերմունքից ելնելով: Դատավորի սուբյեկտիվ գնահատականը տվյալ լրագրողի աշխատանքին կամ այն ԶԼՄ-ի աշխատանքին, որը տվյալ լրագրողը ներկայացնում է, կարող է հիմք հանդիսանալ, որպեսզի դատավորը մերժի լուսա/տեսանկարահանում իրականացնելու մասին միջնորդությունը:

«*Դատավորը կարող է վրեժ ունենալ տվյալ լրատվամիջոցի նկատմամբ ու արգելել տեսա/լուսանկարահանումը, եթե օրինակ թերթը անդրադարձել է նրա կայացրած վճիռներին, ուշադրության կենտրոնում է պահել տվյալ դատավորին: Սա ակնհայտ խտրականություն է*». Ռուզան Մինասյան

Լրագրողների աշխատանքը հաճախ կախված է լինում ոչ միայն դատավորի սուբյեկտիվ վերաբերմունքից, այլև վերջինիս տվյալ օրվա տրամադրությունից: Լրագրողներին ոչինչ չի մնում անել, քան խաղալ նիստը նախագահող դատավոր սահմանած կանոններով:

«*Երբեմն դատավորները փորձում են խորամանկության դիմել՝ ասելով, թե այսօր տրամադրությունս լավ չի, մազերս սարքած չի… Հարթությունը փոխվում է, օրենքի դաշտից անցնում են մարդկայի-ընկերական դաշտ*». Արման Սուլեյմանյան:

Անկախ նրանից, թե ինչ պատճառաբանությամբ է արգելվում լուսա/տեսանկարահանում իրականացնելը, արգելքի դեպքում վիդեոնյութեր պատրաստող լրագրողը պարզապես զրկվում է տվյալ դատական նիստը լուսաբանելու հնարավորությունից:

«*Ես չեմ կարող առանց պատկերի աշխատել, պատկերն ամեն ինչ է, որպեսզի տուժող կողմի վճռականությունն ու էմոցիաները ցույց տաս, դատական պրոցեսի լարվածությունը ցույց տաս: Եթե դու կադրեր չունես, ոչ ոք պարտավոր չէ քեզ հավատալ: Սա հարված է անաչառ լրագրության ողնաշարին: Սա անթույլատրելի է*». Արման Սուլեյմանյան:

2.1.2 Լուսանկարահանում և տեսանկարահանում իրականացնելու սահմանափակումներն ու դրանց հետ կապված խնդիրները

Դատական նիստերի լուսա/տեսանկարահանման արգելքից բացի, ոլորտը լուսաբանող լրագրողները այլ խոչընդոտների էլ են հանդիպում, որոնցից առաջնայինը լուսա/տեսանկարահանման ժամանակային սահմանափակումն է: Թեև գործող օրենսդրությունը որևէ կերպ չի նախատեսում ժամանակային սահմանափակում, այդպիսի պրակտիկան լայնորեն տարածված է բոլոր դատարաններում, և բազմաթիվ դատավորներ դիմում են դրան: Դատավորները հիմնականում չեն բացատրում կամ պարզաբանում, թե ինչու են որոշում սահմանափակել լուսա/տեսանկարահանում իրականացնելու ժամանակը:

«*Դատավորն ինքը որոշում է, որ լրագրողի համար բավական է ընդամենը 5 րոպե նկարահանելը: Բայց դատավարությունն ակտիվ պրոցես է և լրագրողը պետք է կարողանա իր ցանկացած պահին նկարահանումներ անել*». Ռուզան Մինասյան:

«*Շատ ընդունված է Հայաստանում լրագրողի փոխարեն որոշելը, թե ինչ է իրեն պետք, այդ պատճառով էլ դատավորը կարող է ասել՝ հինգ րոպե նկարահանեք, դա ձեզ համար բավական է նյութ պատրաստելու համար*». Սյուզան Սիմոնյան:

Դատավորները հիմնականում թույլատրում են լուսա/տեսանկարահանում իրականացնել դատավարության մեկնարկի առաջին 5-10 րոպեների ընթացքում, իսկ երբեմն ավելի քիչ ժամանակ են տրամադրում՝ մինչև 2 րոպե: Այս ընթացքում հիմնականում ընթացակարգային հարցեր են քննարկվում և բուն դատական վեճը դեռ սկսված չի լինում: Սա վիդեոնյութ պատրաստող լրագրողի համար անհնարին է դարձնում նիստի լիարժեք լուսաբանումը, քանի որ շատ հաճախ դատավարության կողմերի խոսքը մնում է կադրից դուրս:

Լուսա/տեսանկարահանման սահմանափակումը որոշ դատավորներ պատճառաբանում են, թե ֆոտոխցիկների արձակած ձայնը կամ լույսը շեղում է իրենց աշխատանքը կամ որ տեսախցիկների առկայությունը պարզապես կաշկանդում է իրենց: Այս պատճառաբանությունը հիմնականում չի բավարարում դատական նիստեր լուսաբանող լրագրողներին մի պարզ պատճառով, որ դատավորը պետական մարմնի ներկայացուցիչ է, պատասխանատու պաշտոն է զբաղեցնում և իր անձնական կաշկանդվածությունը տեսախցիկից չպիտի հիմք հանդիսանա, որպեսզի սահմանափակվի դատական նիստի ամբողջական լուսաբանումը:

«*Տեսանկարահանման արգելման կամ սահմանափակման պատճառաբանություններն ինձ երբեք չեն բավարարել, համարում եմ, որ դրանք կամային որոշումներ են եղել: Երբ օրենքը հստակեցվի, դատավորների կամայականությանը վերջ կտրվի: Թող հստակ գրվի, թե որ դեպքում ինչ է կարելի և ինչ չի կարելի: Դատավորը պետք է օրենքով պարտադրված լինի իր որոշումը հիմնավորելու առումով*». Թեհմինե Ենոքյան:

2.1.3 Դատական նիստերի լուսաբանման տեխնիկական խոչընդոտները

Օրենքով դատավորներին տրված լայն հայեցողությունն ու նրանց կողմից իրենց լիազորությունների չարաշահումը միակ խնդիրը չէ, որի հետ լրագրողները բախվում են դատական նիստեր լուսաբանելիս: Դատարանի դահլիճում նաև տեխնիկական խնդիրներ են ի հայտ գալիս: Մասնավորապես, Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում առկա ապակեպատ դահլիճում ընթացող դատական նիստերի լուսաբանումը տեխնիկական պատճառներով գրեթե անհնարին է դարձնում լրագրողների աշխատանքը: Դատավարության կողմերը նիստին ներկա քաղաքացիներից, այդ թվում և լրագրողներից, առանձնացված են թափանցիկ ապակիով: Ապակին ոչ միայն անվտանգություն է երաշխավորում դատավարությանը ներկա անձանց համար, այլև խլացնում է ձայները: Ապակուց այս կողմ տեղադրված է բարձրախոս, որի միջոցով էլ դատավարությանը ներկա անձինք պետք է լսեն, թե ինչ է կատարվում դատավարության ընթացքում: Դատավարության մասնակիցների խոսքը, սակայն, հաճախ լսելի չէ: Լրագրողները նիստի ընթացքում մշտապես լարում են իրենց լսողությունը՝ կողմերի արտաբերած խոսքը ճիշտ

ընկալելու համար, սակայն հաճախ դա էլ չի օգնում և նյութերում անճշտություններից խուսափելն անհնար է դառնում:

«*Ապակեպատ նիստերի դահլիճում անհնար է աշխատել, չի լսվում, թե կողմերն ինչ են ասում: Վերջերս մի իրավիճակ ստեղծվեց, որ պաշտպանական կողմի ներկայացված միջնորդությունը լսելի չէր: Ես ստիպված եմ եղել նիստից հետո մոտենալ պաշտպանին ու խնդրել, որ միջնորդության օրինակը տա ինձ, որպեսզի չսխալվեմ*». Տաթև Խաչատրյան:

Լրագրողներից շատերը խուսափում են լուսաբանել ապակեպատ դահլիճում ընթացող գործերը, քանի որ արձանագրվել են դեպքեր, երբ ձայնի վատ լսելիության պայմաններում սխալներ են թույլ տվել և հետագայում կշտամբանքներ են լսել՝ նիստի ընթացքում տեղի ունեցածը սխալ վերարտադրելու պատճառով:

Այս տեխնիկական խնդիրը ոչ միայն ապախրախուսում է դատական նիստերին լրագրողների մասնակցությունը, այլև հաճախ դե յուրե դռնբաց դատական նիստերը վերածում է դե ֆակտո դռնփակի, քանի որ նիստի ընթացքը դարձնում է անհասանելի դատավարության մասնակիցների համար:

«*Կաշառք վերցնելու մեջ մեղադրվող նախկին դատավոր Իշխան Բարսեղյանի գործը հենց այս դահլիճում է քննվում: Ես ուղղակի դադարեցրել եմ լուսաբանումը, քանի որ նիստերի ընթացքում ոչինչ լսելի չէր: Ու էլի կային լրագրողներ, որոնք այլևս չէին գալիս նիստերին այդ պատճառով*». Սուսաննա Պողոսյան:

2.2 Դատական նիստեր լուսաբանող լրագրողների հետ առցանց հարցման արդյունքների վերլուծություն

Առցանց հարցմանը մասնակցել են դատական նիստեր լուսաբանող 30 լրագրողներ՝ տարբեր լրատվամիջոցներից և հասարակական կազմակերպություններից՝ Երևանում և մարզերում («Կենտրոն», «Գալա», «Ֆորտունա» հեռուստաընկերություններ, Հանրային ռադիո, «Առավոտ», «Հրապարակ» օրաթերթեր, www.hetq.am, www.a1plus.am, www.1in.am, www.lragir.am, www.news.am, www.civilnet.am, www.pastinfo.am, www.aysor.am, www.epress.am, www.para.tv, www.iravaban.net, www.factor.am, www.armday.am, www.legalinfo.am, ինչպես նաև «Իրավունքի Եվրոպա միավորում» և «Հելսինկյան Ասոցիացիա» հասարակական կազմակերպություններ):

Հարցմանը մասնակցած լրագրողների մեծամասնությունը շաբաթը մեկ անգամ է լուսաբանում դատական նիստեր, հիմնականում՝ քրեական գործեր, երբեմն՝ վարչական, առավել հազվադեպ՝ քաղաքացիական: Լրագրողներին առաջադրվել են մի շարք հարցեր, այդ թվում՝

- Ի՞նչ խնդիրների եք բախվել նիստերը լուսաբանելիս:
- Ձեզ հանդիպած դեպքերում լուսա/տեսանկահարանում անելու վերաբերյալ դատարանի արգելքը որքանո՞վ էր հիմնավորված և օրինական:
- Ձեզ կարծիքով, ո՞րն է առկա խնդիրների պատճառը:
- Ձեզ կարծիքով, ի՞նչ է անհրաժեշտ անել խնդրի լուծման համար:

Ստորև ներկայացվում են լրագրողներին ուղղված հարցերը, առաջարկվող տարբերակներն ու տրված պատասխանների տեսապատկերը:

Ի՞նչ խնդիրների եք բախվել նիստերը լուսաբանելիս:

Հարցմանը մասնակցած լրագրողները հնարավորություն են ունեցել ընտրելու հետևյալ տարբերակներից մեկը կամ մի քանիսը:

1. Տեղյակ չեմ եղել, թե ինչ իրավունքներ ունեմ որպես լրագրող:
2. Տեղյակ չեմ եղել, թե ինչպես պիտի դիմեմ դատարանին՝ լուսա/տեսանկարահանում իրականացնելու համար:
3. Կաշկանդվել եմ ուղղակիորեն դատարանին դիմել:
4. Ստիպված եմ եղել դիմել կողմերից որևէ մեկին՝ լուսա/տեսանկարահանման միջնորդություն ներկայացնելու համար:
5. Տեղյակ չեմ եղել դատական նիստն ազատորեն ձայնագրելու իրավունքի վերաբերյալ:
6. Դիմել եմ դատարանին, սակայն վերջինս թույլ չի տվել լուսա/տեսանկարահանում իրականացնել:
7. Գործընկերներս են դիմել դատարանին, սակայն վերջինս թույլ չի տվել լուսա/տեսանկարահանում իրականացնել:
8. Դատավորը թույլատրել է լուսա/տեսանկարահանել, սակայն սահմանափակ ժամանակով:
9. Դատական նիստի կարգադրիչներն առանց դատարանի որոշման արգելել են լուսա/տեսանկարահանում իրականացնել:

Աղյուսակ 1



Աղյուսակ 1-ում երևում է, որ ամենաշատ հանդիպող խնդիրը եղել է դատավորի կողմից լուսա/տեսանկահանումը սահմանափակելը: Դատարանի կողմից լուսա/տեսանկարահանման արգելքը ևս լրագրողներին հաճախ հանդիպող խնդիրների շարքում է: Հարցմանը մասնակցող 5 լրագրող էլ նշել է, որ դատական նիստի կարգադրիչներն առանց դատարանի որոշման արգելել են լուսա/տեսանկարահանում անել:

Ձեզ հանդիպած դեպքերում լուսա/տեսանկահարանում իրականացնելու վերաբերյալ դատարանի արգելքը որքանո՞վ էր հիմնավորված և օրինական:

Հարցմանը մասնակցած լրագրողները հնարավորություն են ունեցել ընտրելու հետևյալ տարբերակներից մեկը կամ մի քանիսը:

1. Դատավորն առանց որևէ հիմնավորման է արգելել լուսա/տեսանկարահանում իրականացնել:
2. Դատավորը դատավարության կողմերի հետ քննարկելուց հետո է միայն մերժել միջնորդությունը:
3. Դատավորը դատավարության կողմերի հետ քննարկել է, և թեև նրանք չեն առարկել, այնուամենայնիվ, մերժել է միջնորդությունը:
4. Ես տեղյակ չեմ, որ դեպքում է դատարանի որոշումը համարվում հիմնավորված և օրինական՝ ուստի հստակ չեմ կարող պատասխանել:
5. Դատավորը հստակ բացատրել և հիմնավորել է, թե ինչու է արգելում կամ սահմանափակում լուսա/տեսանկահանում իրականացնելու ժամանակը:

Աղյուսակ 2



Աղյուսակ 2-ն արտացոլում է, որ անգամ այն պարագայում, երբ դատավարության կողմերը չեն առարկել, դատավորի կողմից լուսա/տեսանկարահանման արգելքի 8 դեպք է արձանագրվել: Հարցման

մասնակիցների զգալի մասը նշել է, որ դատավորն առանց որևէ հիմնավորման է արգելել լուսա/տեսանկարահանում իրականացնելը:

Ձեզ կարծիքով, ո՞րն է առկա խնդիրների պատճառը:

Հարցմանը մասնակցած լրագրողները հնարավորություն են ունեցել ընտրելու հետևյալ տարբերակներից մեկը կամ մի քանիսը:

1. Օրենսդրական բացը. օրենքով հստակ սահմանված չէ դատական նիստերի ընթացքում լուսա/տեսանկարահանում իրականացնելու իրավունքը:
2. Դատավորների հայեցողական/սուբյեկտիվ վերաբերմունքը լրագրողի նկատմամբ:
3. Լրագրողների՝ իրենց իրավունքների չիմացությունը:
4. Դատավարության մասնակիցների կաշկանդվածությունը տեսախցիկներից:
5. Դատավորների կաշկանդվածությունը տեսախցիկներից:
6. Դատարանների կոռումպացվածությունն ու գործի քննության հրապարակայնացումից խուսափելը:

Աղյուսակ 3



Հարցմանը մասնակցած լրագրողները կարծում են, որ առկա խնդիրների պատճառը դատավորի և դատավարության մասնակիցների կաշկանդվածությունն է տեսախցիկներից, ինչպես նաև օրենսդրական բացն ու դատավորների սուբյեկտիվ

վերաբերմունքը լրագրողների նկատմամբ: Դատարանների կոռումպացվածությունը ևս լրագրողներն առանձնացրել են որպես լուսա/տեսանկարահանումն արգելելու հիմնական պատճառներից մեկը:

Ձեզ կարծիքով, ի՞նչ է անհրաժեշտ անել խնդրի լուծման համար:

Հարցմանը մասնակցած լրագրողները հնարավորություն են ունեցել ընտրելու հետևյալ տարբերակներից մեկը կամ մի քանիսը:

1. Օրենսդրական բարեփոխումներ. հստակեցնել լուսա/տեսանկարահանում անելու իրավունքը օրենքում:
2. Լրագրողներին լուսա/տեսանկարահանման միջնորդություն ներկայացնելու իրավունք տալ:
3. Դատավորներին պարտավորեցնել հիմնավորել լուսա/տեսանկարահանում անելու միջնորդության մերժումը:
4. Դատավորներին պարտավորեցնել չսահմանափակել լուսա/տեսանկարահանում անելու ժամանակը:
5. Լրագրողներն վերապատրաստել՝ իրազեկելով իրենց իրավունքների մասին:

Աղյուսակ 4



Առաջարկվող լուծումներից լրագրողների համար ամենանախընտրելին օրենսդրական փոփոխությունն է: Հարցմանը մասնակցածներից 11-ը համարում են, որ լրագրողը պետք է լուսա/տեսանկարահանման միջնորդություն անելու իրավունք ունենա և որ դատավորներին պետք է պարտավորեցնել չսահմանափակել լուսա/տեսանկարահանում անելու ժամանակը:

Այսպիսով, դատական նիստեր լուսաբանող լրագրողների հետ անցկացված առցանց հարցումը ևս հավաստում է, որ առաջնային է լուսա/տեսանկարահանում իրականացնելու արգելքների ուսահմանափակումների խնդիրը: Հարցման մասնակիցներից շատերը հիմնավորված չեն համարում դատավորների որոշումը՝ լուսա/տեսանկարահանումը սահմանափակելու վերաբերյալ: Առցանց հարցումից ևս պարզ է դառնում, որ խնդրի կարգավորման օրենսդրական տարբերակն է նախընտրելի լրագրողների համար:

ԳԼՈՒԽ III Առաջարկություններ և հանձնարարականներ

«Իրավունքի ուժ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, ջատագովելով դռնբաց դատական նիստերի հրապարակայնության սկզբունքի պահպանումը և մտահոգ լինելով Հայաստանում լրագրողների աշխատանքի ապօրինի և անհիմն խոչընդոտումներով ու սահմանափակումներով, բոլոր շահագրգիռ կողմերին է ներկայացնում է հետևյալ առաջարկություններն ու հանձնարարականները:

ՀՀ Արդարադատության նախարարությանը՝

- նախաձեռնել օրենսդրական բարեփոխումներ դատական նիստերի լուսա/տեսանկարահանման իրավունքը հստակեցնելու, ինչպես նաև դրա հետ կապված ընթացակարգերը սահմանելու նպատակով
- ընդունել «Իրավունքի ուժ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ներկայացրած օրենքների նախագծերը, անհրաժեշտության դեպքում լրամշակել դրանք՝ ոլորտի մասնագետների հետ խորհրդակցելով

ՀՀ արդարադատության խորհրդին՝

- կարգապահական պատասխանատվության ենթարկել բոլոր այն դատավորներին, ովքեր, օգտվելով օրենսդրական բացի ընձեռած հնարավորությունից, չարաշահում են իրենց լիազորությունները և անհիմն կերպով արգելում կամ սահմանափակում են դռնբաց դատական նիստերի լուսա/տեսանկարահանումը

ՀՀ դատարանների նախագահների խորհրդին՝

- մինչ համապատասխան օրենսդրական բարեփոխումները հանդիպումներ կազմակերպել դատարանների նախագահների և դատական նիստեր

լուսաբանող լրագրողների միջև՝ խնդիրները քննարկելու և լուծումներ առաջարկելու նպատակով

- մինչ համապատասխան օրենսդրական բարեփոխումները բոլոր դատավորներին հանձնարարել առավել հանդուրժող գտնվել լրագրողների աշխատանքի նկատմամբ, չսահմանափակել լուսա/տեսանկարահանման ժամանակը և չարգելել լուսա/տեսանկարահանումը առանց լեգիտիմ հիմնավորումների

ՀՀ բոլոր դատավորներին՝

- հարգել լրագրողների մասնագիտական աշխատանքը և չստեղծել անհարկի խոչընդոտներ և սահմանափակումներ նրանց համար
- չսահմանափակել լուսա/տեսանկարահանման ժամանակը և չարգելել լուսա/տեսանկարահանումը առանց լեգիտիմ հիմնավորումների

Դատական նիստեր լուսաբանող լրագրողներին՝

- հետևողական լինել դատական նիստերի լուսաբանման ապօրինի խոչընդոտների և սահմանափակումների նկատմամբ, դիմել համապատասխան ատյաններ արգելքներն ու սահմանափակումները վերացնելու պահանջով

ՀՀ-ում գործող բոլոր լրատվամիջոցներին

- հետևողականորեն լուսաբանել դատարաններում լրագրողների աշխատանքի ապօրինի արգելքներն ու սահմանափակումները

ՀՀ դատական դեպարտամենտին՝

- ցուցում տալ դատական կարգադրիչներին հարգանք դրսևորել դատական նիստեր լուսաբանող լրագրողների և օպերատորների աշխատանքի նկատմամբ, չգերազանցել լիազորություններն ու առանց դատարանի համապատասխան որոշման չսահմանափակել լրագրողների աշխատանքը դատարաններում

Լրագրողների իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություններին, փաստաբաններին, անկախ իրավապաշտպանների ու փորձագետներին

- Ուշադրության կենտրոնում պահել դատական նիստեր լուսաբանող լրագրողների աշխատանքի ապօրինի արգելքի ու սահմանափակումների դեպքերը, անհրաժեշտության դեպքում քայլեր ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ

Հավելված 1

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի դատական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 20-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1, 1.2 եւ 1.3-րդ մասերով.

«1.1. Գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն:

1.2. Դռնբաց դատական նիստի ամբողջ ընթացքը կարող է լուսանկարահանվել, տեսաձայնագրվել, ինչպես նաև հեռարձակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ համացանցով:

1.3. Դատավարության մասնակիցների միջնորդությամբ եւ դատարանի որոշմամբ բացառիկ դեպքերում կարող է սահմանվել դռնբաց դատական նիստի մասնակի՝ դատական նիստերի դահլիճի մի հատվածի, լուսանկարահանում, տեսաձայնագրում կամ հեռարձակում հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կամ ընտանեկան կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 2

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թվականի հունիսի 1-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Գործի դատաքննության ամբողջ ընթացքը կարող է սղագրվել, գրառվել և ձայնագրություն: Գործի դռնբաց դատաքննությունը կարող է լուսանկարահանվել, տեսաձայնագրվել, ինչպես նաև հեռարձակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ համացանցով:

Սահմանադրական դատարանի որոշմամբ կարող է սահմանվել գործի դռնբաց դատաքննության մասնակի՝ դատական նիստերի դահլիճի մի հատվածի, լուսանկարահանում, տեսաձայնագրում կամ հեռարձակում հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կամ ընտանեկան կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 3

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 314-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7, 8, 9, 10 եւ 11-րդ մասերով.

«7. Գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն:

8. Դռնբաց դատական նիստի ամբողջ ընթացքը կարող է լուսանկարահանվել, տեսաձայնագրվել, ինչպես նաև հեռարձակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ համացանցով:

9. Դատավարության մասնակիցների միջնորդությամբ եւ դատարանի որոշմամբ կարող է սահմանվել դռնբաց դատական նիստի մասնակի՝ դատական նիստերի դահլիճի մի հատվածի, լուսանկարահանում, տեսաձայնագրում կամ հեռարձակում հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական

անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կամ ընտանեկան կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:

10. Դատական նիստի լուսանկարահանումը, տեսաձայնագրումը կամ հեռարձակումը կարող է սկսվել սույն հոդվածի իններորդ մասում նշված միջնորդությունները քննարկելուց հետո:

11.Դատական նիստում դատավորի կամ մեղադրողի գործողությունները լուսանկարահանելը, տեսաձայնագրելը կամ հեռարձակելը չի կարող սահմանափակվել»:

Հոդված 2. Օրենսգիրքի 42-րդ գլխում՝

1) լրացնել նոր 318.1-ին հոդված հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 318.1. Դռնբաց դատական նիստի մասնակի լուսանկարահանման, տեսաձայնագրման կամ հեռարձակման վերաբերյալ միջնորդությունների քննարկումը եւ լուծումը

1. Դատական նիստին կանչված անձանց ներկայությունը ստուգելուց անմիջապես հետո նախագահողը լսում է դատական նիստի մասնակի լուսանկարահանման, տեսաձայնագրման կամ հեռարձակման վերաբերյալ միջնորդությունները եւ դրանց քննարկման արդյունքում անհապաղ կայացնում որոշում:

2. Միջնորդությունների բացակայության դեպքում լուսանկարահանումը, տեսաձայնագրումը կամ հեռարձակումը համարվում է թույլատրած դատական նիստի ամբողջ ընթացքում»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 4

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 114-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Գործին մասնակցող անձինք և դռնբաց դատական նիստին ներկա գտնվողներն իրավունք ունեն կատարել գրառումներ, սղագրություն և ձայնագրություն: Դռնբաց դատական նիստի ամբողջ ընթացքը կարող է լուսանկարահանվել, տեսաձայնագրվել, ինչպես նաև հեռարձակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ համացանցով:

Կողմերի միջնորդությամբ եւ դատարանի որոշմամբ կարող է սահմանվել դռնբաց դատական նիստի մասնակի՝ դատական նիստերի դահլիճի մի հատվածի, լուսանկարահանում, տեսաձայնագրում կամ հեռարձակում հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կամ ընտանեկան կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով»:

Հոդված 2. Օրենսգրքի 123-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ եւ 4-րդ մասեր.

«3. Դատական նիստին ներկայացած մասնակիցների ինքնությունը պարզելուց եւ ներկայացուցիչների լիազորությունները ստուգելուց անմիջապես հետո նախագահողը լսում է դատական նիստի մասնակի լուսանկարահանման, տեսաձայնագրման կամ հեռարձակման վերաբերյալ միջնորդությունները եւ դրանց քննարկման արդյունքում անհապաղ կայացնում որոշում:

4. Միջնորդությունների բացակայության դեպքում լուսանկարահանումը, տեսաձայնագրումը կամ հեռարձակումը համարվում է թույլատրած դատական նիստի ամբողջ ընթացքում»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված 5

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 100-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ մաս.

«5.1. Դռնբաց դատական նիստի ամբողջ ընթացքը կարող է լուսանկարահանվել, տեսաձայնագրվել, ինչպես նաև հեռարձակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ համացանցով:».

3) 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Դատավարության մասնակիցների միջնորդությամբ եւ դատարանի որոշմամբ կարող է սահմանվել դռնբաց դատական նիստի մասնակի՝ դատական նիստերի դահլիճի մի հատվածի, լուսանկարահանում, տեսաձայնագրում կամ հեռարձակում հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կամ ընտանեկան կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:».

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ մասով

«7. Դատական նիստում դատավորի կամ վարչական մարմնի ներկայացուցչի գործողությունները լուսանկարահանելը, տեսաձայնագրելը կամ հեռարձակելը չի կարող սահմանափակվել:»:

Հոդված 2. Օրենսգրքի 107-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ եւ 5-րդ մասեր.

«4. Դատական նիստին ներկայացած դատավարության մասնակիցների եւ այլ անձանց ինքնությունը պարզելուց եւ ներկայացուցիչների լիազորությունները ստուգելուց անմիջապես հետո նախագահողը լսում է դատական նիստի մասնակի լուսանկարահանման, տեսաձայնագրման կամ հեռարձակման վերաբերյալ միջնորդությունները եւ դրանց քննարկման արդյունքում անհապաղ կայացնում որոշում:

5. Միջնորդությունների բացակայության դեպքում լուսանկարահանումը, տեսաձայնագրումը կամ հեռարձակումը համարվում է թույլատրած դատական նիստի ամբողջ ընթացքում»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը: